

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

Աստվածաբանության ֆակուլտետի խորհրդի 2011թ. հունվարի 18-ի նիստի

**Ներկա էին՝** պատմ. գիտ. թեկն. **Անուշավան եպս. Ժամկոչյան** (խորհրդի նախագահ), պատմ. գիտ. թեկն., ասիստ. **Ա. Յ. Բայյան** (խորհրդի քարտուղար), պատմ. գիտ. թեկն., դոց. **Ա. Է. Հովհաննիսյան**, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Ռ. Հ. Վարդանյան**, իր. գիտ. դոկտ., պրոֆ. **Գ. Ս. Ղազինյան**, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Հ. Գ. Ավետիսյան**, պատմ. գիտ. դոկտ. **Լ. Ա. Սարգսյան**, փիլ. գիտ. թեկն., դոց. **Ա. Գ. Քալաշյան**, փիլ. գիտ. թեկն., ասիստ. **Գ. Ա. Սարգսյան**, փիլ. գիտ. դոկտ. **Հ. Հ. Քեռսեյան**, ասիստ. **Ժ. Վ. Պապոյան**, պատմ. գիտ. թեկն. **Ս. Ս. Մկրտչյան**, պատմ. գիտ. թեկն., ասիստ. **Ա. Գ. Մանուչարյան**, դսի. **Գ. Հ. Ղուչյան**, ասպիրանտ **Ա. Մ. Մարմարյան**, ուսանող **Լ. Ռ. Աղամյան**:

### ՕՐԱԿԱՐԳ

1. 2010-2011 ուստարվա բակալավրիատի պետական քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովի նախագահ պ.գ.դ. պրոֆ. Է.Մ. Շիրինյան)
2. 2010-2011 ուստարվա մագիստրատուրայի պետական քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփում (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովի նախագահ պ.գ.դ. պրոֆ. Է.Մ. Շիրինյան):
3. Լսեցին.- 2010-2011 ուստարվա ԵՊՀ ասպիրանտուրա ընդունելության հարցը (զեկ.՝ պ.գ.թ. Ա. Յ. Բայյան՝ խորհրդի քարտուղար):

Զեկուցողը նշեց 2011թ. Մայիս ամսին պետական քննական հանձնաժողովը ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում անցկացրեց բակալավրիատի պետական քննություն (մայիսի 10, 11, 12-ին) և ավարտական (դիպլոմային) աշխատանքների պաշտպանություն (մայիսի 17, 18, 19-ին):

Նկատի առնելով այն հանգամանքը, որ «Աստվածաբանություն» մասնագիտության գծով ֆակուլտետը տալիս է համալսարանական կրթության տասներորդ շրջանավարտները: Հնաձևաժողովը քննություններն անցկացրեց առանձնահատուկ ուշադրությամբ՝ ընդհանուր գնահատական տալու միտումով:

Ֆակուլտետի ղեկանատը և ամբիոնները լավ էին նախապատրաստվել պետական քննություններին և ավարտական (դիպլոմային) աշխատանքների պաշտպանությանը: Այդ հարցը բազմիցս քննարկվել էր ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում, ղեկանատի և ամբիոնների համատեղ նիստերում և ֆակուլտետի խորհրդում:

2010-2011 ուստարում պետական քննությունների և ավարտական (դիպլոմային) աշխատանքների պաշտպանությանը մասնակցելու իրավունք ունեին բակալավրիատի ավարտական կուրսի բոլոր 40 ուսանողները:

«Վարդապետական աստվածաբանություն» առարկայի պետական քննություն են հանձնել 28 ուսանող, որոնք համապատասխանաբար ստացել են 22 «գերազանց», 2 «լավ», 3 «բավարար» գնահատական, միայն մեկը՝ Գարեգին Քերոբի Սահակյանը, ստացավ «անբավարար» գնահատական:

«Ընդհանուր և հայ եկեղեցու պատմություն» առարկայի պետական քննությանը մասնակցել են 12 ուսանողներ, որոնք համապատասխանաբար ստացել են 4 «գերազանց», 3 «լավ» և 3 «բավարար» գնահատական:

Պետական քննության ընթացքում ուսանողների մեծամասնությունը դրսևորեց համապատասխան նյութի իմացություն:

Այսպիսով, ընթացիկ ուս. տարում Աստվածաբանության ֆակուլտետի բակալավրիատի պետական քննություններին ներկայացած 40 ուսանողներից 39-ը հաջողությամբ հանձնեցին նախատեսված քննությունները, իսկ մեկը ստացավ անբավարար գնահատական:

Ֆակուլտետի խորհրդի որոշմամբ ավարտական (դիպլոմային) աշխատանք գրելու իրավունք էր վերապահվել 40 ուսանողի, որոնցից 12 ուսանող ավարտական աշխատանքներ պաշտպանեցին «Վարդապետական աստվածաբանություն», 13 ուսանող՝ «Կրոնների պատմություն», և 15 ուսանող՝ «Հայ եկեղեցու պատմություն և եկեղեցաբանություն» մասնագիտական ուղղության գծով:

2008-2009 ուստարվա շրջանավարտ Իշխան Մուշեղի Գրիգորյանը, որը «Հայ եկեղեցու պատմություն և եկեղեցաբանություն» մասնագիտական ուղղության գծով չէր պաշտպանել ավարտական աշխատանքը, ԵՊՀ թիվ 53§39 25.03.11թ. հրամանի համաձայն մասնակցեց 2010-2011 ուստարվա ավարտական (դիպլոմային) աշխատանքների պաշտպանությանը և ստացավ «բավարար» գնահատական: ԵՊՀ թիվ 72§5 25.04.11թ. հրամանի համաձայն 2009-2010 ուստարվա շրջանավարտ Գարիկ Ռուբենի Խաչատրյանին թույլատրվել էր մասնակցելու 2010-2011 ուստարվա պետական քննությանը: Նա հաջողությամբ հանձնեց պետական քննությունը և ստացավ «բավարար» գնահատականը:

«Վարդապետական աստվածաբանություն» մասնագիտական ուղղության գծով ավարտական աշխատանք պաշտպանած 13 ուսանողներից 4-ը ստացել են «գերազանց», 1-ը՝ «լավ» և 6-ը «բավարար» գնահատական:

«Կրոնների պատմություն» մասնագիտական ուղղության գծով ավարտական աշխատանք պաշտպանած 13 ուսանողներից 8-ը ստացել են գերազանց, 4-ը՝ լավ, 1-ը՝ բավարար գնահատական:

«Հայ եկեղեցու պատմություն և եկեղեցաբանություն» մասնագիտական ուղղության գծով ավարտական աշխատանք պաշտպանած 14 ուսանողներից 8-ը ստացել են գերազանց, 5-ը՝ լավ, 1-ը՝ բավարար գնահատական:

Ավարտական (դիպլոմային) աշխատանքները շարադրված էին տրամաբանված, գրագետ և, որ կարևոր է, ուսանողները ավարտական աշխատանքները շարադրելիս օգտվել էին օտարալեզու գրականությունից:

Պետական ավարտական հանձնաժողովի որոշմամբ 6 ուսանող արժանացավ գերազանցության դիպլոմի: Առարկաներին խոր և հիմնավոր տիրապետելու մեջ աչքի ընկան առանձնապես Ամիրյան Մարիամը, Ալեքսանյան Լեյլին, Փարեմուզյան Գայանեն, Յուխանյան Նիկողոսի:

Այսպիսով, բակալավրիատի 2010-2011 ուստարվա ավարտական կուրսի բոլոր 40 ուսանողները բարձր ցուցանիշներով ավարտեցին համալսարանը և պետական քննական հանձնաժողովի կողմից ստացան համապատասխան որակավորում:

Տարեցուարի Աստվածաբանության ֆակուլտետն ավելի ու ավելի է մտնում համապատասխան հունի մեջ: Այժմ ուսումնադաստիարակչական աշխատանքներով և իր գործունեությամբ ֆակուլտետը լիովին համահունչ է Մայր բուհի ոգուն:

Վերջում անհրաժեշտ եմ համարում նշել, որ ֆակուլտետի հաջողությունները կապված են դեկան Տ. Անուշավան եպս. Ժամկոչյանի դեկանատի ու ամբիոնների ամենօրյա լարված աշխատանքի, ուսումնադաստիարակչական գործը հմտորեն կազմակերպելու և բարձր պատասխանատվության հետ:

### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Նիստի բոլոր մասնակիցները

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2010-2011 ուստարվա բակալավրիատի պետական քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները համարել լավ:

**2. ԼՄԵՑԻՆ.-** 2010-2011 ուստարում մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցեցին ավարտական կուրսի բոլոր 18 ուսանողները:

Մագիստրոսական թեզերը գրված էին մասնագիտական երեք՝ «Վարդապետական աստվածաբանություն» (7 ուսանող), «Կրոնների պատմություն» (5 ուսանող) և «Հայ եկեղեցու պատմություն և եկեղեցաբանություն» (6 ուսանող) ուղղությունների գծով:

Մագիստրոսական թեզերը շարադրված էին տրամաբանված, գրագետ, գիտական աշխատանքներին առաջադրվող պահանջներով: Հետազոտական թեմաները պրոբլեմային էին և արդիական, կարևոր էր և այն, որ բոլոր մագիստրոսներն էլ թեզերը շարադրելիս օգտվել էին օտարալեզու գրականությունից: Արդյունքները գոհացուցիչ էին:

«Վարդապետական աստվածաբանություն» մասնագիտացման 7 ուսանողներից 7-ը ստացել են գերազանց գնահատական, «Կրոնների պատմություն» մասնագիտացման 5 ուսանողներից 4-ը ստացել են գերազանց գնահատական, իսկ 1-ը՝ լավ գնահատական: «Հայ եկեղեցու պատմություն և եկեղեցաբանություն» մասնագիտացման 6 ուսանողներից 6-ը ստացել են գերազանց գնահատական:

Մասնագիտությունը խորը և հիմնավոր տիրապետելու մեջ աչքի ընկան Շուշան Խաչատրյանը, Հայկ հակոբյանը, Գառնիկ Հարությունյանը, Լիլիթ Միսակյանը, Մարի Մամյանը, Մելինե Ավետիսյանը:

Այսպիսով մագիստրատուրայի 2010-2011 ուստարվա ավարտական կուրսի բոլոր 18 ուսանողներն էլ բարձր գնահատականներով ավարտեցին մագիստրատուրան և հանձնաժողովի կողմից ստացան համապատասխան որակավորում:

«Աստվածաբանություն» մասնագիտության գծով մագիստրոսական կրթությամբ շրջանավարտների առկայությունը կարևոր նշանակություն ունի հայագիտության ողջ համակարգի համար:

**Որոշեցին.**- 2010-2011 ուստարվա մագիստրատուրայի պետական քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտօնության արդյունքները համարել գերազանց:

**3 ա. ԼՍԵՑԻՆ.**- Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 2010-2011 ուստարվա շրջանավարտ, Աստվածաբանության մագիստրոս Գառնիկ Արմենակի Հարությունյանի ասպիրանտուրա ընդունելության երաշխավորելու հարցը (զեկ.՝ պրոֆ. Ռ. Ն. Վարդանյան):

Զեկուցողը նշեց, որ ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի բակալավրիատը 2009թ. Ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ մագիստրատուրա, որի գերազանց գնահատականներով ավարտել է 2011թ.:

Հաշվի առնելով այն, որ Գառնիկ Արմենակի Հարությունյանը աչքի է ընկնում մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածությամբ, տիրապետում է հետազոտական նյութի վերլուծության և համադրության տեխնիկային, որոշակի փորձ և հմտություն է ձեռք բերել սկզբնաղբյուրների մշակման և յուրացման գործում՝ Աստվածաբանության ամբիոնը նրան երաշխավորել է ուսումը շարունակել ասպիրանտուրայում և միջնորդել ֆակուլտետի խորհրդին քննարկել խնդրո առարկա հարցը:

Այնուհետև զեկուցողը Աստվածաբանության ամբիոնի միջնորդությունը ներկայացրեց խորհրդի քննարկմանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**- Տ. Անուշավան եպս. Ժամկոչյան, Ա. Գ. Քալաշյան և Լ. Ա. Սարգսյան:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- Հաշվի առնելով Աստվածաբանության ամբիոնի միջնորդությունը՝ մագիստրատուրայի 2010-2011 ուստարվա շրջանավարտ, աստվածաբանության մագիստրոս Գառնիկ Արմենակի Հարությունյանին երաշխավորել ԵՊՀ առկա ուսուցման ասպիրանտուրա ընդունվելու համար:

**3 բ. ԼՍԵՑԻՆ.**- Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 2010-2011 ուստարվա շրջանավարտ, Աստվածաբանության մագիստրոս Հայկ Երջանիկի Հակոբյանին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առկա ասպիրանտուրա ընդունելության երաշխավորելու հարցը (զեկ.՝ պ.գ.դ. Լ. Ա. Սարգսյան):

Զեկուցողը նշեց, որ ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի բակալավրիատը 2009թ. Ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ մագիստրատուրա, որի գերազանց գնահատականներով ավարտել է 2011թ.:

Հաշվի առնելով այն, որ Հայկ Երջանիկի Հակոբյանը աչքի է ընկնում մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածությամբ, տիրապետում է հետազոտական նյութի վերլուծության և համադրության տեխնիկային, որոշակի փորձ և հմտություն է ձեռք բերել սկզբնաղբյուրների մշակման և յուրացման գործում՝ Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնը նրան երաշխավորել է ուսումը շարունակել ասպիրանտուրայում և միջնորդել ֆակուլտետի խորհրդին քննարկել խնդրո առարկա հարցը:

Այնուհետև զեկուցողը Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի միջնորդությունը ներկայացրեց խորհրդի քննարկմանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Տ. Անուշավան եպս. Ժամկոչյան, Ա. Գ. Քալաշյան և Լ. Ա. Սարգսյան:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաշվի առնելով Աստվածաբանության ամբիոնի միջնորդությունը՝ մագիստրատուրայի 2010-2011 ուստարվա շրջանավարտ, աստվածաբանության մագիստրոս Հայկ Երջանիկի Հակոբյանին երաշխավորել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առկա ասպիրանտուրա ընդունվելու համար:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**պ.գ.թ. դոցենտ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԵՊՍ ԺԱՄԿՈՉՅԱՆ**

**ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**պ.գ.թ. Ա. Յ. ԲԱԼՅԱՆ**